

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾԻ ՄԸ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
ՎԱՀԱՆ ԹԵՔԷԱՆԻ «ՅՈՅՍԻ ԵՐԳԸ»

ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ
mayrenipublishing@comcast.net

Վահան Թեքեան¹ Եգիպտոսի *Արեւ* թերթի² 21 Փետրուար 1916ի համարով ունի առաջնորդող յօդուած մը, զոր վերնագրած է «Յոյսի Երգը»:

Խմբագրական սիւնակներուն մէջ ամփոփուած այդ յօդուածը մէկէ աւելի առումով առանձին հետաքրքրութիւն ներկայացնելով՝ մեզ կը հրաւիրէ մեկնաբանելու զայն:


Յօդուածը կը սկսի այլաբանական յատկանշական պատկերով մը, ուր ընթերցողը կը տարուի լսելու Առաջին Աշխարհամարտի³ ռազմական գործողութիւններուն ժխորը, միաժամանակ տեսնելով ուրուագիծը հսկայ բանտի մը նմանող օսմանեան բռնատիրութեան, որուն պատերուն քայքայման մէջ իրենց դերն են ունեցած կամաւորական զոհերով թէ ինքնապաշտպանական հերոսամարտերով իրենց արեան տուրքը բերած հայորդիներ, յուսալով որ ա՛լ հնչած է թրջական լուծը թօթափելով Դաշնակից Պետութեան մը թեւարկութեան ներքեւ անցնելու պահը:

Թեքեանի գրչին տակ թրջական տիրապետութենէն «դաշնակից ազգի մը տիրապետութեան» անցնելու ակնարկութիւնը ուղղակի կ'առնչուի Հայ Ազգային Պատուիրակութեան⁴ պաշտօնական կեցուածքին, որ մշակուած էր Փեթրոկրատի մէջ եւ ներկայացուած Պօղոս Նուպարի⁵, որպէսզի այդ հիմամբ վարէ իր բանակցութիւնները Դաշնակից պետութիւններու (Ռուսաստան, Ֆրանսա եւ Անգլիա) ներկայացուցիչներուն հետ⁶:

*Արեւ*ն ու իր շրջանակը կամ իր գլխաւոր աշխատակիցները սերտօրէն կապուած էին Պօղոս Նուպարի հետ: Թերթը կը գործէր իբրեւ խօսակողը Հայ Ազգային Պատուիրակութեան եւ գլխաւոր սատարիչը թէ՛ Պօղոս Նուպարի եւ խումբ մը գործակիցներու նախաձեռնութեամբ 1906ին Գահիրէ հիմնուած Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան⁷ եւ թէ՛ Գէորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսին⁸ հաւանութեամբ եւ օրհնութեամբ

Պօղոս Նուպարի յայտարարած Ազգային Շահերու Պաշտպանութեան Հիմնադրամին⁹:

Գլխաւոր առիթը այս «յուսոյ երգ»ին՝ ռուսական բանակին յաղթական յառաջխաղացքն էր արեւելեան ռազմաճակատին վրայ եւ մասնաւորապէս թրքական ուժերուն նահանջը Կարին-Էրզրումէն¹⁰: Կարնոյ առումը ունէր շրջադարձային այնպիսի տարողութիւն¹¹, որ իրաւամբ կը կատարէր յուսադիչ դեր, թէւ Թէքէեանի մօտեցումով անխառն չէր այդ պահուն բերած ուրախութիւնը:



Հայութիւնը

բազմահազար զոհեր տուած էր տարագրութեան, սովին, կոտորածներուն, բռնի իսլամացման, եւ չէր կրնար իր ուրախութիւնն անխառն ըլլալ, չէր կրնար ժպիտին հետ միախառն արցունք չգտնուիլ վերապրողներու եւ աշխարհասփիւռ հայերու աչքերուն մէջ, ինչպէս որ չէր կրնար բարեգալստեան զգացումներուն կողքն ի վեր չտողոսկիլ ստուերը մեղադրանքի:

Դաշնակիցներէն աւելին սպասած էր հայութիւնը եւ աւելի՛ շուտ: Թերեւս նաեւ կար մորմորը յաղթական հերոսամարտէ մը ետք ռուսական զօրքերու նահանջով Վանէն հայոց նահանջին, զոր Թէքէեան եւ իր գաղափարակիցները մինչեւ վերջ պիտի նկատէին անտեղի ու անարդարանալի սխալ:¹²

Կարեւորը, այդ պահուն, այն էր, հեղինակին եւ շատերու համար, որ թուրքին անկումը պիտի ըլլար անխուսափելի, նոյնքան անխուսափելի ըլլալով հայուն վերաշինութեան եւ վերականգնումի ճիգը:

Թուրքին անկման վարակիչ համոզումը կազմած էր հիմը արեւմտահայութեան ճակատագրով զբաղող քաղաքական պատասխանատու դէմքերու գործունէութեան¹³:

Այս համոզումին վառ արտայայտութիւնն էր արդէն Թէքէտանին «Պիտի Իյնաս» հնչեակը՝ ուղղուած «Հայուն Ոսոխին», որ ընթերցողներուն յանձնուած էր Արեւի երկրորդ համարով իսկ, 13 Մայիս 1915ին: Հոն Թէքէտան կ'ըսէր.

*Պիտի Իյնաս այս անգամ ... եւ ա'լ իսպառ, անյարիր
Պիտի մընաս գեպնին վրայ՝ ճանկւորելով հողը դեռ...
Եւ դեռ երկա'ր չըմեռնիս պիտի, եւ Կունըդ մոխիր
եղած՝ ծածկէ պիտի քեզ, երբեմնի Կո'նդ եռուզեռ...
Հերի'ք որքան աշխարհի ցաւ ու չարիք հասուցիր,
Որքան ի սուգ պայտեցիր քաղաք ու գիւղ, դաշտ ու լեռ.
Հերի'ք մայրերը լացին բոյներնուն վրայ ցանուցիր,
Եւ լեցուցիր մեր սիրտին խորը միայն ոխ ու հեռ...:
Պիտի Իյնաս, կ'իյնաս ա'լ...: Բայց որպէսզի դեռ ճանչնաս
Քու անարգ սիրտըդ ծակող մեծագոյն ցաւը վերջին՝
Պիտի զարնեն քեզ Անո'նք որ քեզ յաճախ փրկեցին...
Եւ չըմեռած դեռ Կոնսնես պիտի, ահե'ղ պատուհաս,
Ծաղկիլը մեր աշխարհին զոր թողուցիր աւերակ,
Եւ մեր խայրանքը ազապ' քու ըստրուկի աջքիդ Կրակ...¹⁴:*

PRODOTTI
Dr. DER STEPANIAN
YOGHURT - KEFIR
Creme ai fermenti lattici
(Cinque tipi: Semplice, all'arancio, alla fragola, al miele, al succo d'orzo).
FERMENTI LATTICI
Per la preparazione in casa del yoghurt e del kefir.
I fermenti lattici più potenti nel loro ambiente naturale: in alimenti lattici prodigiosi dotati di grande potere nutritivo.
Laboratorio di Fermenti Lattici e Acidi Fermentati
Dr. N. DER STEPANIAN
TORINO
Corso Reale, Margherita, 72 - Telefono 41.255

«Յուսոյ Երզը» գրութեան մտայղացման երկրորդ դրդապատճառ դարձած էր Թէքէտանին՝ «բարեկամ»է կամ «երիտասարդ բժիշկ»է մը ստացած մէկ նամակը, որմէ լայն մէջբերում մը կատարած է ան իր առաջնորդող յօդուածին մէջ:

Ո՞վ էր արդեօք այդ եւրոպաբնակ երիտասարդ բժիշկը:

Նամակագիրին ինքնութիւնը բացայայտող ապացոյցը պիտի յայտնուէր Թուրքիոյ

Հայոց Պատրիարքութեան՝ Երուսաղէմ պահպանուող դիւանաթուղթերուն մէջ:

Թէ ինչպէ՞ս Թէքէտանին ուղղուած նամակ մը կրնար յայտնուիլ հոն, կարելի է տրամաբանօրէն ենթադրել թէ այդ նամակը պատահականօրէն կրնայ միացած ըլլալ խումբ մը ուրիշ նամակներու, որոնք անմիջական առնչութիւն ունեցած են Պոլսոյ Ազգային Ժողովին կողմէ Թէքէտանին վստահուած սաղիմական առա-

քելության հետ եւ հաւանաբար այդ իսկ պատճառով Թէքէան որոշած է զանոնք յանձնել Ազգային Ժողովի քարտուղարութեան:

Թէքէան, 1908ին Պոլիս վերադառնալէ քիչ ետք Ազգային Ընդհանուր Ժողովի երեսփոխան ընտրուած էր Եգիպտոսէն եւ այդ ընտրութիւնը վաւերացուած էր Ազգային Ժողովի 21 Նոյեմբեր 1908ի նիստին¹⁵: Նոյն ժողովը իր 17 Յունուար 1914ի նիստի ընթացքին Թէքէանն ընտրած էր աշխարհական պատուիրակ՝ կրօնական պատուիրակ Մաղաքիա Արք. Օրմանեանի¹⁶ հետ քննելու Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան մատակարարական կացութիւնը, դարման մը գտնելու համար առենէ մը իվեր հոն տիրող մտահոգիչ եւ անբաղձալի վիճակին: Համաշխարհային Առաջին Պատերազմն ու այլ պատճառներ Թէքէանը մղած էին ընդհատելու իր առաքելութիւնն ու անցնելու Եգիպտոս¹⁷:

Թէքէան Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան գործերով զբաղելու առաքելութեամբ պատուիրակի դերակատարութիւնը պիտի շարունակէր այս անգամ Ազգային Պատուիրակութեան առաջարկով 1918ի Ապրիլին: Ի տարբերութիւն առաքելութեան առաջին հանգրուանին, որ յաջողութիւն չէր գտած Օրմանեանի անուղիղ ընթացքին հետեւանքով, այս անգամ նոյն նպատակով Երուսաղէմ մեկնած Եգիպտոսի հայոց առաջնորդ Թորգոմ Եպս. Գուշակեանի¹⁸ հետ սերտ գործակցութեամբ կը յաջողի կեանքի կոչել վարչական ժողով մը, որուն պարտականութիւնը պիտի ըլլար զբաղիլ վանքին մատակարարութեամբ:

Վերադառնալով յայտնաբերուած նամակին, որ Իտալիոյ Թորինո քաղաքէն գրուած է 26 Յունուար 1916ին, անոր հեղինակն էր *Armenia* պարբերականի հրատարակիչը՝ Նշան Տէր Ստեփանեան, որ ծնած էր Երզնկա 1889ին:

Թորինոյի Քաղաքային Արուեստի Թանգարանին մէջ պահպանուած նիւթերու համաձայն, Տէր Ստեփանեան 1913ին Թորինոյի մէջ հաստատած էր կաթնական մանրէաբուժութեան կամ այլապէս մածուխի արտադրութեան աշխատանոց մը¹⁹:

Առաջին Աշխարհամարտը դժուար կացութիւն մը ստեղծած էր եւրոպական շարք մը երկիրներ բնակող թրքահպատակ հայերու համար, որոնց հանդէպ տեղական իշխանութիւններէն անոնք, որոնք պաշտօնապէս կեցուածք պարզած էին ընդդէմ գերմանեութեան դաշինքին կամ աւելի հակամէտ էին

պաշտպանելու Անգլիա-Ֆրանսա-Ռուսաստան առանցքին բռնաձիգիբ, իբրեւ թշնամի պետութեան քաղաքացիներու կը վերաբերէին այդպիսիներու եւ հակամէտ էին արտաքսելու զանոնք, ինչպէս էր պարագան Անգլիոյ եւ Իտալիոյ մէջ:

Իտալիոյ պարագային, այդ հոսանքին հակազդելու, տեղական հայկական համայնքներու շահերը, անոնց քրիստոնէական նկարագիրն ու իրենց բնական երկրին հանդէպ հաւատարմութիւնը շեշտելով պաշտպանելու, ապա նաեւ Հայկական Հարցն ու թուրքերու կողմէ հայոց հանդէպ գործադրուող ոճիրները տեղացիներուն ծանօթացնելու համար, Նշան Տէր Ստեփանեան Վենետիկի Մուրատ-Ռափայէեան Վարժարանէն Միլան եւ Թորինո բնակող խումբ մը ուրիշ շրջանաւարտներու հետ մէկտեղ եւ տեղաբնակ ունետոր հայերու գործակցութեամբ նախաձեռնողներէն կ'ըլլար Իտալիոյ Հայոց Կոմիտէին հիմնադրութեան, կը ստանձնէր անոր քարտուղարի պարտականութիւնը եւ 1915ի Հոկտեմբերին իր խմբագրութեամբ լոյսին կը բերէր առաջին թիւը *Armenia* անուն իտալերէն պարբերականին²⁰, զոր պիտի հրատարակէր մինչեւ 1918ի Հոկտեմբեր ամիսը, նախ իբրեւ «Հայկական շահերու արծագանգ» հանդիսացող ամսաթերթ՝ պատուակալ տնօրէն ունենալով գրաքննադատ, պատմաբան եւ բանաստեղծ Փրոֆ. Քորրաւո Քորրատինօն (1852-1923):

Յետագայ իրադարձութիւններ Թէքէեանն ու Տէր Ստեփանեանը պիտի դարձնէին գործակից ու զաղափարակից:

Գործակից, որովհետեւ 1919ի աշնան Թէքէեան եւ Տէր Ստեփանեան, երկուքն ալ անդամ՝ Հայ Ազգային Համագումարի, Փարիզէն Պոլսոյ վրայով պիտի ուղղուէին Երեւան՝ հայկական միացեալ կառավարութեան մը ստեղծման գծով բանակցութիւններ ունենալու Հայաստանի Առաջին Հանրապետութեան վարիչներուն հետ:

Գաղափարակից, որովհետեւ Տէր Ստեփանեան պիտի միանար Փարիզ հիմնուած Հայ Ազգային Ազատական Միութեան²¹, որուն գլխաւոր դէմքերէն մին էր Արշակ Զօպանեան եւ որ Թէքէեանի գործակցութեամբ պիտի հարթէր ազգայնական-ռամկավարական հոսանքներու միացումով Ռամկավար Ազատական Կուսակցութեան հիմնադրութեան գետինը 1921 թուականի 1 Հոկտեմբերին:

Ահաասիկ պարբերականին նամակաթուղթով²² Թէքէեանին ուղղուած նամակին բովանդակութիւնը, ուր շեղագրած ենք այն հատուածը, զոր Թէքէեան օգտագործած է իր առաջնորդող յօդուածին մէջ: Նկատելի են կէտադրական եւ ուղղագրական կարգ մը տարբերութիւններ, որոնք կրնան սպրդած ըլլալ գրաշարման պահուն կամ հետեանքը ըլլալ Թէքէեանի միջամտութեան: Բացառուած չէ նաեւ երրորդ կարելիութիւն մը՝ թէ՛ գրաշարական եւ թէ՛ խմբագրական գործօններու համատեղ առկայութիւնը:

* * *

Թորինս, 26/1/1916

Յարգելի Պարոն Վ. Թէքէեան

Ձերմասէս շնորհակալ եմ Ձեր 2 Դեկտ.ի շատ ազնիւ նամակին համար²³: Ներեցէք, եթէ, բեռնաւորուած՝ ինչպէս եմ Armeniaի, propagandaի եւ անձնական զբաղումներով, Ձեզի քիչ մ'ուշ պատասխանելու թերութիւնը կը գործեմ: Երախտապարտ ենք Ձեզ՝ «Արեւ»ին մէջ Armenianով զբաղելնուդ²⁴: Եւ պիտի խնդրէի՝ որ երբեմն, ինչպէս ամէն նոր թիւի առիթով, քանի մը տողով յանձնարարէիք Armeniaն հայ հասարակութեան: Որքան որ շատ աժան նշանակած ենք բաժանորդագրութեան գինը, այդ անփութեանալի հասոյթ մը չի կազմեր Armeniaի աղքատ դրամարկդին համար:

Շնորհակալ եմ նաեւ ջերմասէս «Արեւ»ը, Ձեր պատուական «Արեւ»ը մեզ կանոնաւոր կերպով դրկելնուդ, եւ կը խնդրեմ որ շարունակէք: Ճիշդ է որ պատերազմին յառաջ բերած փոստի անկանոնութեան պատճառով երբեմն թիւեր կը կորսուին, բայց ինչ որ կը հասնի՝ նուազ կարելոր չէ մեզ համար: «Արեւ»ի հին թիւերէն շատ երախտիքով պիտի ստանայինք Վանի ինքնապաշտպանութեան վերաբերող յօդուածներ պարունակող թիւերը, ինչպէս եւ անոնք՝ որոնք կարելոր գրուածքներ կը պարունակեն հայ կամաւորներու եւ 4000 կիլիկեցիներու դիւցազներգութեան²⁵ վերաբերող:

Հաճոյքով կ'օգտուիմ եւ պիտի օգտուիմ Ձեր թելադրութիւններէն: Դժբաղդաբար հայ գրականութենէն շատ քիչ բան ունինք տրամադրելի եւ պատերազմի այս օրերուն շատ դժուար է ձեռք բերել գիրքեր՝ որոնց ուր ըլլալը, ուր տպուած ըլլալը չենք գիտեր: Ինչպէս տեսած կ'ըլլաք, սակայն, արդէն

Դեկտ. 15 թիվին մէջ հրատարակեցի Գամառ Քաթիպայի²⁶ գեղեցիկ «Արաքսի արտասուքը»ին թարգմանութիւնը:

Հազիւ Ձեր նամակն ստացայ Ձեր հասցէին դրկեցի քանի մը թիւ Armeniah I թիւէն:

Կը շնորհաւորեմ Ձեզ ջերմօրէն «Արեւ»ի ուղղութեան համար: Շար ցաւայի բաներ կան, ճիշդ է, մեր ազգին մէջ. բայց ար անխուսափելի է ամէն ազգի համար: Իմ խոնարհագոյն կարծիքով, մենք քիչ մը չափազանց կը տեսնենք մեր թերութիւնները, եւ շար քիչ՝ ուրիշներունը, այն պարզ պարճառով որ ինքզինքնիս շար քիչ կը ճանչնանք այն ամէն իրերուն մէջ՝ որոնք մեր դրական յարկութիւններն են, մինչդեռ ուրիշները առաւելապէս կը ճանչնանք իրենց դրական քան թէ բացասական արժանիքներուն մէջ: Մնաց որ, բնական է թէ աւելի ցայտուն կերպով տեսանելի ըլլան աղքատ եւ թշուառ ազգի մը թերութիւնները, ճիշդ ինչպէս աղքատ եւ թշուառ անձի մը թերութիւնները: Եւ եթէ ինքնաբննադատութիւնը բեղուն գործ է մինչեւ որոշ աստիճան մը, արկէ վերջ կը դառնայ անշարժութեան եւ վիպարութեան աղբիւր: Ես կը կարծեմ՝ թէ մենք նուազ «անմիաբանութիւն» ունէինք, քան ինչ որ ստեղծեցինք անմիաբանութեան դէմ պայքարելով: Եւ մեր անմիաբանութեան ցնորքով ոգեւորուելուս պարճառը՝ մեր մօտաւոր նախնիքներուն հայկական պարմութիւնը շար կողմնակի, միամիտ եւ ուրիշ պարմութիւններէն անկախ ճանչնալուն մէջն է: Ես կը յիշեմ թէ ինչպէս 7-8 տարեկան եղած արեւնէս ի վեր՝ ամէն օր լսեր եմ մեր անմիաբանութեան մասին: Այնպէս որ մեր մանկութենէն կը սկսինք այդ վարկածով համակուիլ եւ զայն իբր բնազդ մը զգալ, եւ ոչ թէ իբր խստօրէն մտածուած իրականութիւն մը դաւանիլ: Եւ այսպէս ամէն անգամ որ հայը ձեռնարկի մը ձեռք կը զարնէ՝ իր շուրջ կը գրնէ սկեպտիկներու վոհման մը, որոնք սկեպտիկ են որովհետեւ նախապաշարուած են հայկական անմիաբանութեան հաւատամքով: Ու եթէ այսօր մեր մէջ իրականապէս գոյութիւն ունի անմիաբանութիւն, ար մեր հոգիին մէկ բնածին յարկութիւնը չէ, այլ մեր նախապաշարեալ դաստիարակութեան մէկ ծնոյթը:

Մեր միւս գլխաւոր դժբաղդութիւնն է եղած այն պարագան՝ որ լուրջ եւ մեծ պէտքեր չենք ունեցած եւ թերեւս ալ այսօր իսկ չունինք: Աւելի լաւ եղած պիտի ըլլար, եթէ մեր գործերը վարուած ըլլային մեծաքանակ bon sens ունեցող ուղղամիտ վաճառական եւ հետեւաբար գործնական մարդոցմէ, քան թէ մեր մրատրականութենէն՝ որ թերութիւնը ունեցած է միշտ շարքադափարապաշտ ըլլալու եւ այդ գաղափարապաշտութեան հիւանդութեան բերումով իրականութիւնը իրականօրէն չտեսնելու: Մենք դեռ երէկ չէինք հասկցած եւ չեմ գիտեր թէ այսօր լաւ հասկցա՞ծ ենք, թէ այս աշխարհին մէջ այլեւս ամէն բան վաճառականութիւն է, թէ ամէն բան, մէջն առնելով գեղեցիկ բաները, պէտք է գնել, վճարել: Մենք այսօրուան արիւնոտ արցունքները պիտի չլայինք հաւանօրէն՝ եթէ փոխանակ մեր աւանդական ողբերով լեցնելու Երոպան, իոն քիչ մը աջ ու ձախ, մասնաւորապէս լրագիրներու խմբագրատունները²⁷, ոսկի ցանած ըլլայինք:

Հայաստանի ինքնավարութիւնն այսօր անվիճելի կարելիութիւն է: Ու ես իմ համեստ կարծիքով համոզուած եմ՝ որ եթէ մենք գիտնանք բաւականաչափ դրամ հաւաքել եւ նպատակայարմարօրէն գործածել, ան իրականութիւն պիտի ըլլայ: Անշուշտ խելքը, հանճարը, իրատունքը եւն. իրենց արժէքը ունին, բայց այսօրուան աշխարհին մէջ այդ ամէն բաները կուր չեն արժէր եթէ դրամով առանցքուած չըլլան: Չափազանց հեռու ենք ասպետական դարերէն: Ամէն ցանք թափելու է «Ազգ. Շահերու Հիմնադրամ»ը ուճացնելու համար: Կ'ըսեն, աշխարհի մէջ յիմարօրէն տարածուած կարծիք է, թէ դրամ ունինք եւ շարք. արդ, այդ դրամները, եթէ կան, մէջտեղ հանելու արեւնն է: Ես համոզուած եմ ամբողջ էութեամբ որ այսօր երոպական քաղաքականութեան մէջ նոյնիսկ ամենաչնչին ազդեցութիւն ունեցող անհատներուն 1000էն 1ը հազիւ իրականապէս ցաւակից է մեր վիճակին: Երոպան կ'անգիտանայ արցունքը, լացը, ան միայն հիանալու տրամադիր է եւ մանաւանդ դրամին վրայ հիանալու:

Ներեցէք այս թերեւս անլորդ խօսքերով Ձեր ժամանակէն գողնալուս եւ ընդունեցէք իմ ջերմագին յարգանքներս:

Ն. Տէր Ստեփանեան

Ահաասիկ Թեքեանի առաջնորդող յօդուածն իր ամբողջութեամբ:

ՅՈՅՍԻ ԵՐԳԸ

Այժմէութեան խոշոր աղմուկին մէջէն, զոր հեռուէն թռչող եկող թնդանօթներու գոռումը, հրացաններու որոտն ու սուփներու շաշխունը կը յօրինեն, ահա՛ նորէն կը լսուի Հայուն անունը, տկար ու երկչոտ, բանտի մը նկուղներուն մէջ խեղդուած մարդու մը ձայնին պէս, որ շէնքին փլշելովը երեսան կ'ելլէ եւ իր անգոր բայց որոշ նօթը կը խառնէ շուրջի ահաւոր ժխորին: Զինք մեռած կը կարծիին, եւ ահա՛ որջ է դեռ: Ան մինչեւ իսկ կրնայ, տեղ-տեղ, դուրս չգալ փլատակներուն տակէն, բայց թշնամի ու բարեկամ զինքը նորէն պիտի տեսնեն, նորէն պիտի լսեն իր հծծիւնը՝ որ մահուան եւ ուրախութեան հծծիւնն է միանգամայն, իբրեւ ուրուական մը պիտի տեսնեն ու պիտի լսեն զայն, ա՛յնքան լեցուն են այդ տեղերը իրմով, այնքան սպասեր էր ան այս վայրկեանին եւ մինչեւ վերջը իր ալիւաներովն ու արմուկներովը կրծեր, մաշեցուցեր էր պատերն այս շէնքին որ վերէն վար կը փլիշ կ'իյնայ ահա՛...: Էրզրումէն մինչեւ Տրապիզոն, մինչեւ Տիգրանակերտ, մինչեւ Ալեքսանտրէթ եւ մինչեւ Պօլիս, ամենուրեք ուր Հայ կար, ամէն քաղաք կամ գիւղ որ վաղը Թուրքին տիրապետութենէն պիտի անցնի դաշնակից ազգի մը տիրապետութեան ներքեւ, նոյն պատկերը պիտի պարզէ եւ նոյն ստուերը պիտի կանգնի անոր սեմին վրայ՝ աչքերուն մէջ ժպիտ եւ արցունք միանգամայն, ու բազուկները երկարած անհուն ժէպթով մը որ՝ բարի գալուստի եւ միեւնոյն ատեն մեղադրանքի ժէպթ մըն է կարծես...:

Ստուե՛ր, ի՛նչ ստուեր: Եթէ մինչեւ իսկ ան դադրած ըլլար մարմնով ապրելէ այդ տեղերուն վրայ, իր հոգին հոն էր եւ հոն է անշուշտ, եւ այդ հոգին շուտով պիտի միանայ, վստահ ենք, հայրենի հողին, օդին ու ջուրին, պիտի մարմնանայ վերստին եւ պիտի շարունակէ ցեղին գոյութիւնը զոր արիւնաբբու եւ յիմար ոտիս մը²⁸ իսպառ ջնջել կարծեց ա՛յսպէս, քանի մը ամսուան մէջ, սուրով եւ սովով միայն...: Էրզրումի մէջ եւ ուրիշ ամէն տեղեր, մենք ներկայ պիտի ըլլանք, այո՛, թուրք կայսրութեան փլուզումին, մեզ պիտի տեսնեն ամենքը, եւ մենք պիտի սկսինք անմիջապէս,

աւերակներուն վրան իսկ, մեր շինարար աշխատանքին որ մեր պատմական դերն է: Փլուզումը սկսած է, այս անգամ վճռապէս ու ճակատագրօրէն սկսած, ու ոչինչ զայն պիտի կասեցնէ՝ այլեւս, ինչպէս որ ոչինչ պիտի կրնայ մեզ ալ կասեցնել—ոչ իսկ մենք ինքզինքնիս—որ վերաշինութեան գործին մէջ մեր աշխատանքի խոշոր բաժինը ունենանք: Ասիկա նոյնքան անխուսափելի, նոյնքան ճակատագրական է՝ որքան անկումը միային:

Այս յուսալից ու կենսախայտ նօթին, որ այսօր, պարագաներուն դրոմամբը, կը հնչէ գրչիս տակ նոյնքան ինքնաբոլս որքան միւս տխուր նօթը որ հնչեց երկար ամիսներու ընթացքին, կուգայ միանալ, շատ բարեղէպ կերպով, հեռաւոր բարեկամի մը նամակին պարունակութիւնը, կատարեալ երգ մը յոյսի եւ հաւատքի, ծանր ու լուրջ՝ ինչպէս վայել է մեր վիճակին մէջ գտնուող ազգի մը:

Բարեկամը որ կը գրէ, անձամբ անձանօթ է ինծի: Գիտեմ միայն թէ երիտասարդ բժիշկ մըն է ան, Վենետիկի աշակերտ, որ եւրոպական երկրի մը մէջ հայկական բրօքականտի շատ օգտակար գործ մը կը կատարէ՝ շատ ալ համեստ կերպով: Ահա՛ թէ ինչ կ'ըսէ ան.

«... Շար ցաւալի բաներ կան, ճիշդ է, մեր ազգին մէջ. բայց ապր անխուսափելի է ամէն ազգի համար: Իմ խոնարհագոյն կարծիքով, մենք քիչ մը չափազանց կը տեսնենք մեր թերութիւնները եւ շար քիչ ուրիշներունը, այն պարզ պարճառով որ ինքզինքնիս շար քիչ կը ճանչնանք այն ամէն իրերուն մէջ որոնք մեր դրական յարկութիւններն են, մինչդեռ ուրիշները առաւելապէս կը ճանչնանք իրենց դրական քան թէ բացասական արժանիքներուն մէջ: Մնաց որ, բնական է թէ աւելի ցայրուն կերպով տեսանելի ըլլան աղքատ եւ թշուառ ազգի մը թերութիւնները, ճիշդ ինչպէս աղքատ եւ թշուառ անձի մը թերութիւնները: Եւ եթէ ինքնաքննադատութիւնը բեղուն գործ է մինչեւ որոշ աստիճան մը, արդէ վերջ կը դառնայ անշարժութեան եւ վիպրութեան աղբիւր: Ես կը կարծեմ՝ թէ մենք նուազ «անմիաբանութիւն» ունէինք, քան ինչ որ ստեղծեցինք անմիաբանութեան դէմ պայքարելով: Եւ մեր անմիաբանութեան ցնորքով ոգեւորուելուն պատճառը՝ մեր մօտաւոր նախնիքներուն հայկա-

կան պատմությունը շատ կողմնակի, միամիտ եւ ուրիշ պատմություններն անկախ ճանչնալուն մէջն է: Ես կը յիշեմ թէ ինչպէս 7-8 տարեկան եղած արեւելս ի վեր՝ ամէն օր լսել եմ մեր անմիաբանութեան մասին: Այնպէս որ մեր մանկութենէն կ'սկսինք այդ վարկածով համակուիլ եւ զայն իբր բնագոյ մը զգալ, եւ ո՛չ թէ իբր խստօրէն մտածուած իրականութիւն մը դաւանիլ: Եւ այսպէս ամէն անգամ որ հայը ձեռնարկի մը ձեռք կը զարնէ՝ իր շուրջ կը գտնէ սկեպտիկներու վոհմակ մը, որոնք սկեպտիկ են որովհետեւ նախապաշարուած են հայկական անմիաբանութեան հաւատամքով: Ու եթէ այսօր մեր մէջ իրականապէս գոյութիւն ունի անմիաբանութիւն, ապա մեր հոգիին մէկ բնածին յարկութիւնը չէ, այլ մեր նախապաշարեալ դաստիարակութեան մէկ ծնոյթը:

Մեր միւս գլխաւոր դժբախտութիւնն է եղած այն պարագան՝ որ լուրջ եւ մեծ պետեր չենք ունեցած եւ թերեւս ալ այսօր իսկ չունինք: Աւելի լաւ եղած պիտի ըլլար, եթէ մեր գործերը վարուած ըլլային մեծաքանակ bon sens ունեցող ուղղամիտ վաճառական եւ հետեւաբար գործնական մարդոցմէ, քան թէ մեր մտաւորականութենէն որ թերութիւնը ունեցած է միշտ շատ գաղափարապաշտ ըլլալու եւ այդ գաղափարապաշտութեան հիւանդութեան բերումով իրականութիւնը իրականօրէն չտեսնելու: Մենք դեռ երէկ չէինք հասկցած եւ չեմ գիտեր թէ այսօր լաւ հասկցա՞ծ ենք, թէ այս աշխարհին մէջ այլեւս ամէն բան վաճառականութիւն է, թէ ամէն բան, մէջն առնելով գեղեցիկ բաները, պէտք է գնել, վճարել: Մենք այսօրուան արիւնտր արցունքները պիտի չլայինք հաւանօրէն՝ եթէ փոխանակ մեր աւանդական ողբերով լեցնելու Երոպան, ի՞նչ մը աջ ու ձախ, ոսկի ցանած ըլլայինք:

Հայաստանի ինքնավարութիւնն այսօր անլիճելի կարեւորութիւն է: Ու ես իմ համեստ կարծիքով համոզուած եմ՝ որ եթէ մենք գիտնանք բաւականաչափ դրամ հաւաքել եւ նպատակայարմարօրէն գործածել, ան իրականութիւն պիտի ըլլայ: Անշուշտ խելքը, հանճարը, իրաւունքը եւլն. իրենց արժէքը ունին, բայց այսօրուան աշխարհին մէջ այդ ամէն բաները կուր չեն արժեր եթէ դրամով առանցքուած չըլլան: Չափազանց հեռու ենք ասպետական դարերէն: Ամէն ջանք թափելու է «Ազգ. Շահերու Հիմնադրամ»ը ուժնաջնելու համար: Կ'ըսեն, աշխարհի

մէջ յիմարօրէն տարածուած կարծիք է, թէ դրամ ունինք եւ շարարդ, այդ դրամները, եթէ կան, մէջտեղ հանելու արեւնն է...»

Յոյսի երգ մը կոչեցի այս նամակը, որովհետեւ ամէն բանէ առաջ Հայու առողջ միտք մը, զարգացած եւ առողջ մնացած միտք մը, կը ցլացնէ ան: Իմ գաղափարապաշտութիւնս թերեւս հարուած մը կը կրէ անկէ, բայց իմ դրապաշտութիւնս, միւս կողմէ, ինքզինքն ա՛յնպէս զօրացած ու փայփայուած կ'զգայ անով՝ որ յօժարակամ կը մոռնամ հարուածին ցաւը...: Ես ուրիշ երիտասարդ²⁹ մըն ալ կը ճանչնամ, այստեղ, որ թէւեւ ինքզինքն այսքան լաւ բացատրելու կարող չէ, բայց նոյնպէս առողջ մտքի— եւ մարմնի ալ—նախանձելի տիպար մը ըլլալով՝ յաճախ ինծի կը թելադրէ որ «քիչ մըն ալ մեր աղէկ կողմերուն վրայ» խօսինք...:

Մինչեւ հիմա չկրցանք, կը խոստովանիմ: Այսուհետեւ, պարագաներն ալ օգնելով, թերեւս կարելի կ'ըլլայ ատկեալ...:

Վահան Թէքէեան

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Վահան Թէքէեան (1878-1945), քանաստեղծ, խմբագիր, ազգային հասարակական գործիչ:

² Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան Եգիպտոսի շրջանակի պաշտօնաթերթ *Արեւ* իբրեւ «ազգային շահերու օրկան» հրատարակուիլ կը սկսի Աղեքսանդրիա, շաբաթը երեք անգամ, 11 Մայիս 1915ին, Լեւոն Մկրտիչեանի արտօնատիրութեամբ եւ Թէքէեանի տնօրէն-խմբագրապետութեամբ: Միայն 4 Մայիս 1921ին է որ թերթը բացայայտօրէն հանրութեան կը ներկայանայ «Պաշտօնաթերթ Հայ Ռամկավար Կուսակցութեան Եգիպտոսի Շրջանակի» նշումով: 7 Հոկտեմբեր 1921ի թիւը լոյս կը տեսնէ իբրեւ պաշտօնաթերթ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Եգիպտոսի Շրջանակի: 11 Դեկտեմբեր 1922ին *Արեւ* լոյսին կու գայ իբրեւ «ժողովրդական օրաթերթ», իսկ 9 Օգոստոս 1924ին *Արեւ* օրաթերթը կը փոխադրուի Գահիրէ՝ թերթին ճակատին վերստին ներկայանալով իբրեւ «Պաշտօնաթերթ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Եգիպտոսի Շրջանակին»:

³ Առաջին Աշխարհամարտը սկիզբ առած է 28 Յուլիս 1914ին՝ նոյն տարուան Յունիս 28ին Սարայեւոյի մէջ Աստրիոյ գահաժառանգ Ֆրանց Ֆերտինանտի ահաբեկումէն ամիս մը ետք Սերպիոյ դէմ Աստրո-Հունգարական կայսրութեան յայտարարած պատերազմով եւ վերջ գտած է 11 Նոյեմբեր 1918ին հռչակուած զինադադարով:

⁴ Հայ Ազգային Պատուիրակութիւնը Գէորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսին նախաձեռնութեամբ կեանքի կոչուած էր 10 Նոյեմբեր 1920ին՝ արեւմտահայոց

իրատնւնները երուպական պետութիւններու միջամտութեամբ պաշտպանելու նպատակով: Պօղոս Նուպարի նախագահութեան ներքեւ գործող պատուիրակութեան կ'անդամակցէին Գէորգ Արք. Իսիմեան, Եագուպ Արթին, Մինաս Չերազ եւ Յարութիւն Մոստիչեան: Պատուիրակութիւնը իր աշխատանքները աւարտած նկատած էր 1914ի Փետրուարին՝ նկատելով որ Օսմանեան Թուրքիան ի վերջոյ ստորագրած էր հայկական նահանգներու բարեկարգութեան փաստաթուղթը 8 Փետրուար 1914ին, բայց Կաթողիկոսը խնդրած էր որ Նուպար շարունակէ պահպանել իր պաշտօնը: Պատուիրակութեան գործունէութեան երկրորդ շրջանը փաստօրէն պիտի սկսէր 1915ի Ապրիլին՝ առանց Մինաս Չերազի մասնակցութեան, Նուպարի կողմէ Կաթողիկոսին 28 Ապրիլ թուակիր հեռագրին ստացումէն ետք:

⁵ Պօղոս Նուպար (1851-1930), հիմնադիր նախագահ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ նախագահ Հայ Ազգային Պատուիրակութեան:

⁶ Փեթրոկրատի ծրագիրը կը նախատեսէր.

1. Ինքնավար Հայաստանի մը ստեղծումը Օսմանեան Կայսրութեան սահմաններուն մէջ:

2. Պահպանումը Թուրքիոյ գերիշխանութեան, որ մի միայն պէտք է սահմանափակուի տէրութեանց ընտրելիք Ընդհանուր Կառավարիչին Սուլթանին կողմէ անուանման եւ թուրք դրօշակին պահպանման մէջ: Անընդունելի են Հայաստանի ներքին գործերուն մէջ ո'նէ միջամտութիւն, ինչպէս նաեւ թրքական զինուորներու ներկայութիւնը Հայաստանի մէջ:

3. Հայաստանի թեաքութիւն (protectorat) երեք տէրութեանց՝ Ռուսիոյ, Անգլիոյ եւ Ֆրանսայի կողմէ:

4. Հայաստանի հողային սահմանները պէտք է պարունակեն, վեց վիլայէթներու հետ (ի բաց առեալ արեւմուտքի եւ հարաւի շրջանակները, որոնք գրեթէ ամբողջովին իսլամ բնակչութիւն ունին), Կիլիկիան՝ Միջերկրականի վրայ Մերսին նաւահանգիստով (Ալեքսանտրէթի ծոցը եւ Եւմուրթալըքը նոյնպէս դուրս թողում են):

5. Ինքնավարութեան ծրագիր մը, հիմնուած ընթրումներու առաջին նախագծին վրայ, զոր Ռուսիա 1913ի ամառը առաջարկեց Կ. Պոլիսի մէջ, քաղաքական պահանջներու փոփոխութեան համաձայն ընդլայնուած բարեփոխումներով: Նուպարի 1915-1916 թուականներու քանակցութիւններուն ամփոփագրերուն եւ թղթակցութիւններուն ի մօտոյ հրատարակելի հայերէն ժողովածուին մաս կազմող այս փաստաթուղթին ընդարձակ օրինակը տեսնել՝ Ջոն Կիրակոսեանի *Հայաստանը Միջազգային եւ Սովետական Արտաքին Քաղաքականութեան Փաստաթղթերում 1828-1923 ժողովածուին* մէջ (Երեւան, Հայաստան Հրատ., 1972, էջ 371-374):

⁷ Իր առաջին իսկ թիւին երկրորդ էջով տրուած յայտարարութեամբ մը խմբագրութիւնը կը նշէր. «ԱՐԵՒ Եգիպտոսի միակ հայաթերթն է որ օրը օրին կը հրատարակէ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ կեանքն ու գործը»:

⁸ Գեորգ Ե. Սուրենյանց (1847-1930) 1911ի Նոյեմբերին ընտրված էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Ազգային Ընդհանուր Ժողովին կողմէ, որուն իրքեւ Եգիպտոսի վիճակի աշխարհական ներկայացուցիչ մասնակցութիւն թերած էր Թէքէեան:

⁹ *Արեւի* 1915ի Յուլիս 9ի համարով եւ «Ազգային Հիմնադրամը եւ Ազգային Կարգախօսը» խորագիրը կրող գրութեան մը մէջ Վահան Մալէզեան կը յայտնէ թէ Նուպար 1915ի Մարտի սկիզբը ՀՀԸՄի ժողովատեղիին եւ ապա Հելիոպոլսոյ իր քնակարանին մէջ խորհրդակցութիւններ ունեցած էր այն համոզումով, որ անհրաժեշտ էր Եգիպտոսի մէջ կեդրոնացնել ազգային-քաղաքական մարմին մը եւ կազմել ազգային հիմնադրամ մը:

«Սակայն ... էնթրիկներու զոհ գնաց գործը. նախ՝ աշխատեցան գործադրութիւնը յետաձգել, յետոյ՝ իր սաղմին մէջ զայն վիժեցնել յաջողեցան անո՛նք՝ որ հասկնալի պատճառներ ունէին այս ազգաշէն ձեռնարկութեան մէջ մրցակցութեան վտանգ մը տեսնելու...:

Վսեմ. Պօղոս Նուպար փաշա ուշ հասկցաւ լարուած մեքենայութեանց բուն իմաստը, բայց երբ իրազեկ եղաւ կացութեան, քոլորովին մէկդի դրաւ Եգիպտոսի մէջ Կեդրոնական Յանձնախումբ մը կազմելու գաղափարը, եւ դառնութեամբ մը զոր չի ծածկեց՝ իր հոյակապ ծրագիրը գեղեցեց «Ազգային Շահերու Պաշտպանութեան» յատուկ հանձնակցութեան մը պարզ ձեռնարկին:

Այս պայմաններուն մէջ էր որ արտասահմանի Հայութիւնը չի կրցաւ ունենալ ազգային քաղաքականութեան կեդրոնական ղեկավար մարմին մը, ինչպէս Կովկաս յաջողած էր ունենալ ազգային կեդրոնական պիւրօ մը»:

Ապա անուան որդեգրման ակնարկելով, Մալէզեան կը տեղեկացնէ թէ Նուպար շրջահայեցաբար նշելով որ թրքահայութիւնը կը գտնուի թուրք խումանի քմահաճոյքին տակ, իսկ եգիպտահայութիւնը՝ մահմետական երկրի մը մէջ, «Ազգային շահեր» անունը կացութեան փրկութեան կը ծառայէ:

¹⁰ Կարին-էրզրումի ռուսական արշաւանքը սկսած էր 10 Յունուար 1916ին եւ աւարտած՝ Նոյն տարուան 16 Փետրուարին, դժուար բայց հետետղական յառաջխաղացներով:

¹¹ Պատմաբաններ յետագային վերլուծելով ռուսական ռազմական գործողութիւնները պիտի նշէին թէ ռուսերը իրենց յաղթարշաւը չջարտանկելով եւ 1916ի Մարտին վերջ տալով իրենց յառաջխաղացքին՝ չկրցան առաւելագոյն արդիւնք քաղել Կարնոյ առումէն: 1916ի Փետրուարին, սակայն, կը տիրէր այն խանդավառութիւնը, թէ Կարնոյ անկումով դուռը լայն բացուած էր լլլլալով ռուսական բանակներուն առջեւ՝ թափանցելու մինչեւ Թուրքիոյ սիրտը: Խօստն է այս առումով *Արեւի* 18 Փետրուար 1916ի թիւով Մ. Տ. (Միհրան Տամատեան) ստորագրութեամբ եւ «Վախճանին Սկիզբը» վերտառութեամբ փոքր գրութիւն մը, ուր կ'ըսուի. «Ներկայ միջազգային պատերազմի ամբողջ տեսողութեան միջոցին չէ՞ պատահած Հայկական ճակատին վրայ դէպք մը որ այնչափ մեծ կարեւորութիւն ունենայ՝ որչափ Էրզրումի առումը...: ...Էրզրումի առումը առաջնակարգ նշանակութիւն ունի

թէ՛ հայկական եւ թէ՛ մանաւանդ ռազմագիտական տեսակետով: Էրզրումի առումը ոչ միայն կ'ամրացնէ՝ ու վերջնական կը դարձնէ Վանայ գրաւումը, այլեւ կը նշանակէ խիստ մօտ ժամանակէն անխուսափելի անկումը Բաղէշին ու Մուշին, որով հայկական վեց նահանգներէն երեք կարեւորագոյնները՝ Էրզրում, Բաղէշ եւ Վան կրնան վերջնականապէս կորստած նկատուիլ Թուրքիոյ համար: Ռուսական այս մեծ յաղթանակէն վերջ՝ ո՛չ միայն Խարբերդի եւ Տիգրանակերտի նահանգները՝ այլ կարելի է ըսել ամբողջ Փոքր Ասիան բաց եւ անպաշտպան կը մնան Նիքոլա մեծ դուքսին քաջայարդ թանակներուն առջեւ: ... Որչափ որ ազգային մեծ սուգեր ունենանք ողբալու, որչափ որ հայկական շահերու տեսակետով իրատունը ունենանք քիչ մը շատ ուշացած նկատելու այս վճռական եղելութիւնը, չենք կրնար զսպել մեր ուրախութիւնը՝ երբ ամէն պատճառ ունինք հաւատալու որ, ազատութեան ու բարօրութեան արշալոյսը կը բացուի վերջապէս դարաւոր ճնշումի ենթարկուած մեր դժբաղդ բայց անկորնչելի ազգին մնացորդներուն»:

- ¹² Այս «Յոյսի երզը» առաջնորդողէն համար մը առաջ, Թէքէեան իր «Ձայնը Հնչեց» խորագրով առաջնորդող յօդուածին մէջ (*Արեւ* 18 Մայիս 1916) կը գրէ. «Ձայնը հնչեց...: Այս անգամ ճիշդ իր տեղէն, Էրզրումէն հնչեց: Ռուս-թուրք պատերազմը կարծես հիմա է որ իր վաւերական գոյնը կը ստանայ, իր պատմական շաւղին մէջ կը մտնէ, իր ռազմական տեսանկյան ու շօշափելի պատկերը կը պարզէ: ...Եւ դէպքը պատահեցաւ... մեզի համար շատ ուշ, ասա՛դ: Ինչո՞ւ պէտք է որ հեռագիրներու բերած այս անտարբեր լուրը կարդալով, իւրաքանչիւր Հայ սրտի անհուն սեղմում մը զգայ այսօր, եւ փոխանակ ուրախութեան՝ ցափ պատկերներ արթննան իր մտքին մէջ: - Դեռ Հայ մնացա՞ծ էր այնտեղ՝ երբ ազատարար բանակը գրոհ տուաւ Կարնոյ բերդերէն ներս... իսկ Թուրքիոյ ուրիշ կողմերու Հայե՛րը, ո՞ր, ինչպէ՛ս, ի՞նչ վիճակի մէջ պիտի լսեն զայն... ինչպէ՛ս երջանիկ եղան—հակառակ վերջէն իրենց կրած մեծ դժբախտութեան—այս պատերազմի ընթացքին Վանեցիք ալ, երբ լման ու յաղթական, յանձնեցին իրենց քաղաքը Ռուսին, որ հին դարերու ասպետի մը պէս կը վազէր անոնց օգնութեան ձայնին, եւ ասպետավայել գեղեցիկ *ժէպ*ով մը՝ իրենց կը յանձնէր քաղաքը, զիրենց ազատել վերջ...: Մինչ հիմա...»:

- ¹³ Յատկանշական են այս ուղղութեամբ Ա. Աշխարհամարտի շրջանին Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահ Նուպարի իբրեւ Օսմանեան Կայսրութեան բռնատիրութեան ներքեւ հեծող հայկական նահանգներու եւ Կիլիկիոյ հայ ազգաբնակչութեան իրատունքներու խօսնակի վարած բանակցութիւններն ու գրած նամակները, որոնք պարփակուած են 2րդ ծանօթագրութեամբ նշուած անգլերէն ժողովածոյին մէջ:

- ¹⁴ Վերը ներկայացնող «Պիտի Իյնաս» հնչեակը Թէքէեան վերամշակած է յետագային եւ ընդգրկած՝ 1919ին Փարիզ հրատարակուած իր *Կես Գիշերէն Մինչեւ Արշալոյս* հատորին մէջ (էջ 11): Թէքէեան հնչեակին գրութեան իբրեւ թուական նշած է 1914, որմէ կը փորձուինք մտածել թէ թուրքերու՝ գերմաններու կողքին Առաջին Աշխարհամարտին մասնակցութիւն բերելու

արարքը եղած ըլլալու է դրդապատճառը: Ահաւասիկ այդ վերամշակեալ օրինակը, որ ուղղուած է «Թուրքին» եւ ոչ թէ «Հայուն Ոսոխին».

*Պիտի իյնաս այս անգամ, եւ ա՛լ իսպառ, անյարիր
Պիտի մընաս գետինն վրայ՝ ճանկարելով հողը դեռ,
Եւ դեռ երկա՛ր չը մեռնիս պիտի եւ փունըդ մոխիր,
Եղած՝ ծածկէ պիտի քեզ, երբեմնի փո՛ւնդ եռուզեռ...*

*Հերի՛ք որքան աշխարհի ցաւ ու չարիք հասուցիր,
Որքան ի սուգ թաթխեցիր քաղաք ու գիւղ, դաշտ ու լեռ.
Հերի՛ք մայրերը լացին քոյներնուն վրայ ցանուցիր
Եւ մեր սիրող սրտերուն մէջ լեցուցի՛ր ո՞խ ու հեռ...*

*Պիտի իյնաս, կ'իյնաս ա՛լ... Բայց որպէս զի դեռ ճանչնաս
Քու անարգ սիրտըդ ծակող մեծագոյն ցաւը վերջին՝
Պիտի զարնեն քեզ անո՛նք որ քեզ յաճախ փրկեցին...,*

*Եւ չը մեռած՝ դեռ փեսնե՛ս պիտի, արդա՛ր պատուուհաս,
Ծաղկիլը մե՛ր աշխարհին զոր թողուցիր անբաւ,
Ու ցնծութի՛ւնը մերին՝ քու ըստրուկի աչքիդ փակ...*

¹⁵ Արշակ Ալաօյանեան, *Վահան Թէքեան Իրր Հանրային Մարդ Եւ Հրապարակագիր*, Պէյրութ, Հայ Տիպ Քուսիկուրաֆ-Թէքնոսիփու, 1988, էջ 116:

¹⁶ Մաղաքիա Օրմանեան (1841-1918), Պատրիարք Թուրքիոյ Հայոց 1896-1908 տարիներուն: Իր *Խոռք Եւ Խօսք* (Երուսաղէմ, 1929) հատորին մէջ երկարօրէն անդրադարձած է իրեն եւ Թէքեանի վատաւում առաքելութեան՝ շարժելով Թէքեանի դժգոհութիւնը եւ պատճառ դառնալով որ Թէքեան հարկ տեսնէ ճշդումներ կատարել *Արեւի* 4-11 եւ 13-15 Ցունիս 1929ի համարներով:

¹⁷ Ալաօյանեան Թէքեանի կեանքին եւ գործին նուիրուած իր վերոյիշեալ աշխատութեան մէջ ընդարձակ բաժին մը յատկացուցած է այս սաղմակեան, պայմանականօրէն, առաջին առաքելութեան (էջ 192-213):

¹⁸ Թորգոմ Գուսակեան (1874-1939) ձեռնհասօրէն վարել է տեղ եգիպտոսի Հայոց Թեմի առաջնորդութիւնը եւ իբրեւ կաթողիկոսական նուիրակ առաքելութիւններ կատարելով Պարսկաստանի եւ Հնդկաստանի մէջ, 1931ին ընտրուած էր Պատրիարք Հայ Երուսաղէմի:

¹⁹ <http://www.museoarteurbana.it/gelati-chiavacci-e-yogurt-stepanian/>, եւ <http://blog.libero.it/lfd/10842650.html>, 9 Ապրիլ 1916ի դրութեամբ:

²⁰ Յակոբիկ Մանուկեան, «Իտալիոյ Հայոց Միութիւնը», <http://www.unionearmeni.it/storia/>, 9 Ապրիլ 2016ի դրութեամբ:

²¹ Հայ Ազգային Ազատական Միութիւնը հանրութեան պաշտօնապէս կը ներկայանար 23 Օգոստոս 1919ին Փարիզ իրատարակուած *Հայաստան* պաշտօնաթերթով: Հոն Հօպանեանի ստորագրութեամբ կը տարփողուէր «Վերականգնեալ Հնչակեան, Սահմ. Ռամկավար եւ Հայ Ժողովրդական» կուսակցութիւններուն միացման եւ ձուլման գաղափարը, որպէսզի իրենց

շուրջ բոլորելով նաեւ քաղաքական կուսակցութիւններէ հեռու մնացած «հայ ազգին ահագին մեծամասնութիւնը», կազմեն «յառաջդիմական, ազգասիրական, ապադասակարգային մեծ կուսակցութիւն մը» (էջ 2): Չօպանեանի գրութեան կը յաջորդէր Տէր Ստեփանեանի «Վատառողջ Պայքարը» խորագրեալ յօդուածաշարքին առաջին մասը, ուր կը քննադատուէին Փարիզ գումարտող Ազգային Համագումարի նիստերը ներքին քաղաքականութեան վերաբերող խնդիրներու եւ վէճերու թատերավայր դարձնող կողմերը, որոնց աագ ուշադրութիւնը կեդրոնացած պէտք է ըլլար հայոց արտաքին քաղաքականութեան վերաբերող հարցերու վրայ:

²² Նամակաթուղթի ճակատին կը կարդանք “Armenia” Periodico mensile pro Armenia. direzione ed amministrazione: Corso Regina Margherita N. 73, Torino: Ասիկա այն նոյն հասցէն է, որ կ'ընէի Տէր Ստեփանեանի մածունի աշխատանցի կամ արտադրամասի ծանուցաթերթիկին վրայ (տեսնել՝ կցեալ նկարը):

²³ Ոչ մէկ տեղ հանդիպած ենք այդ նամակին պատճէնին, ցարդ:

²⁴ *Արեւի* 1 Նոյեմբեր 1915ի համարին երրորդ էջով, «Ազգային Քրոնիկ» գլխուն ներքեւ, կը հանդիպինք հետեւեալ հատուածին. «*Իւրաքեւն «Արմէնիա»*.- Կ'ողջունենք երեսումը իտալերէն Armenia ամսաթերթին, որուն երկրորդ թիւը միայն ստացանք, եւ որ սկսած է հրատարակուիլ Հոկտ. 15էն սկսեալ, Թօրինոյի մէջ, պատուական տնօրէնութեամբ Բրոֆ. Քօրրատտօ Քօրրատինոյի: «Սոյն թերթը, բացի հայկական խնդրոյ վերաբերեալ յօդուածներէ՝ ստորագրուած Իտալացի հայասէրներու կողմէ, կ'ամփոփէ մէկ կողմէ՝ հայկական աղբիւրէ ստացուած տեղեկութիւնները՝ ի պէտս հայկական դատով զբաղող եւրոպացիներու, եւ միւս կողմէ՝ օտար մամուլին մէջ Հայոց մասին երեւցած տեղեկութիւնները եւ կարեւոր յօդուածները: Անիկա այս կերպով կրկնակ շահեկանութիւն մը ունի թէ՛ Հայերու եւ թէ՛ մեր խնդրով զբաղող օտարազգիներու համար: Ունի նաեւ պատկերազարդ ըլլալու առաւելութիւնը: «Ամսաթերթին Բ. համարին մէջ տրուած Ա. համարի բովանդակութենէն հաճոյքով կ'իմանանք՝ որ անոր մէջ թարգմանաբար տպուած են «Արեւ»ի մէջ երեւցած հետեւեալ յօդուածները. «Բրուսիական թթուն»՝ Միքայէլ Կիլոմեանի, «Քսանը»՝ Անցորդի:

«Ամէն քաջակերութեան արժանի այս ամսաթերթին տարեկան բաժանորդագրութիւնն է ֆր. 3.50...»:

²⁵ Նկատի ունի Մուսա Լեռան դիւցազնական ինքնապաշտպանութիւնը:

²⁶ Գրչանունը Ռափայէլ Պատկանեանի (1830-1892), բանաստեղծ եւ արձակագիր:

²⁷ Թէքէեան այս երեք բառերը դուրս ձգած է իր մէջբերած հատուածէն:

²⁸ Տեղին պիտի ըլլայ դիտել տալ թէ Թէքէեան Թուրքիան իբրեւ «յիմար ոսդիս» ընդունելով՝ կը յարի ամբողջ հոսանքի մը, որ Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքին Թուրքիոյ բռնած դիրքը ինքնասպանական արարք նկատելով, յիմարութեամբ կը բացատրէին զայն: Այդ հոսանքին ցայտուն մէկ

դրսերորմին կը հանդիպինք Հայկական Խնդրին վերաբերող այն յիշատակագրին մէջ, զոր Նուպար Ազգային Պատուիրակութեան նախագահի հանգամանքով յանձնած էր Ֆրանսայի Արտաքին Գործերու Նախարարութեան 6 Յունիս 1915ին: Յիշատակագրին համապատասխան հատուածին հայերէն թարգմանութիւնը կ'ըսէ. «Թուրք կառավարութեան յիմարական արարքը, որով դէպի անձնասպանութիւն դիմեց, հակառակ անոր որ Դաշնակից Տէրութիւնները զինքը ապահովցուցած էին թէ պիտի պահպանուի Կայսրութեան ամբողջականութիւնը, այլեւ անխուսափելի դարձուց Թուրքիոյ անդամահատումը»:

²⁹ Հնարատրութիւն չենք ունեցած պարզելու ակնարկեալ երիտասարդին ինքնութիւնը:

THE STORY OF A LEADING ARTICLE VAHAN TEKEYAN'S "SONG OF HOPE"

(Summary)

VATCHE GHAZARIAN

mayrenipublishing@comcast.net

In an optimistic leading article entitled "The Song of Hope," published during World War I on February 21, 1916 in "Arev" newspaper of Cairo, Vahan Tekeyan expressed hope that the time had come for the Armenian population of the historic Armenian provinces to free themselves from the Ottoman yoke and accept the collective protection of the Russian, British, and French allies.

This hope stemmed primarily from the fresh retreat of the Turkish army before advancing Russian troops in Erzurum, the victorious participation of Armenian volunteer fighters in the war, and the heroic battles of self-defense put up by local Armenian communities against the genocidal attempts of Turkish armed forces and mobs. Tekeyan's hope was also fueled by a letter he had received from a certain unnamed "young physician" living in Europe and cited in his article.

The original letter, dated January 26, 1916, was found in the Archives of the Armenian Patriarchate of Turkey, which are currently housed at the Armenian Patriarchate of Jerusalem. This discovery helped us identify the mysterious young physician as Nshan Der Sdepanian.

Der Sdepanian was born in Erzincan in 1889. Upon completion of his higher education as a physician, he settled in Turin or Torino, Italy where he engaged in the study of the therapeutic merits of yogurt and became, possibly, the first manufacturer of yogurt in Torino. In October 1915, Der Sdepanian published the first issue of a periodical, "Armenia," in Italian, to advocate for Armenian interests in Italy during World War I. The periodical published until October 1918.

Little did Tekeyan know at the time that he and Der Sdepanian would collaborate within the sphere of the Armenian National Delegation later and even travel together to Armenia to negotiate on behalf of the Armenian National Delegation with the Armenian government.